ՀՏԴ 328.185

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Անդրադարձ է կատարվել կոռուպցիայի՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի բնույթին և բովանդակությանը: Վերլուծության են ենթարկվել կոռուպցիայի տնտեսական էությունը, անմիջական կապը սեփականության ձևերի և բաշխման հարաբերությունների հետ: Կոռուպցիան ազդում է ռեսուրսների արտադրության և վերաբաշխման բոլոր փուլերի վրա, խախտում է տնտեսական համակարգերի ամբողջականությունը: Այս առումով անհրաժեշտություն է դառնում կոռուպցիայի հակազդման մեխանիզմների կիրառումը կառավարման իրավական, կառուցվածքային և արժեքային հարթություններում:

Առանցքային բառեր. կոռուպցիա, մասնավոր սեփականություն, տնտեսական շահեր, սահմանային գոտի, լեգալ տնտեսություն, ստվերային տնտեսություն, անօրինական հարստացում, բիզնես, անարդյունավետ կառավարում, շուկայական հարաբերություններ:

Կոռուպցիան ցանկացած հասարակության, պետության, տնտեսության կարևորագույն հիմնախնդիրներից է: Այն սոցիալ-տնտեսական երևույթ է, որն ունի համակարգային բնույթ և գործնականում ազդում է հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերի, այդ թվում՝ ռեսուրսների արտադրության և վերաբաշխման գործընթացների բոլոր փուլերի վրա, խախտում է տնտեսական համակարգերի ամբողջականությունը, կրճատում բոլոր մակարդակներում բյուջեների եկամուտները: Կոռուպցիան ուղեկցվում է ոչ միայն ռեսուրսների դուրսմղումով, այլև վիճակագրական, ֆինանսական, հարկային հաշվետվությունների խեղաթյուրումով: Հատկանշական է այն, որ այս հիմնախնդրով զբաղվողների մեծ մասի մեջ ձևավորվել է այն մտայնությունը, թե կոռուպցիան բարոյական, սոցիոլոգիական կատեգորիա է, այլ ոչ թե տնտեսական երևույթ կամ կատեգորիա:

Նախքան սոցիալ-տնտեսական նման երևույթի էության, բովանդակության մասին խոսելը, հարկ է ներկայացնել «կոռուպցիա» հասկացության սահմանումը: «Կոռուպցիա» տերմինը ծագել է լատիներեն «corruptus» և «corrumpere» բառերից, որ նշանակում է փչացում, այլասերում, վարակում, ապականում, աղճատում, աղավաղում, կաշառում և այլն [1]: Գոյություն ունեն կոռուպցիայի տարբեր սահմանումներ՝ մի դեպքում՝ այն ներկայացվում է որպես վստահված իշխանության չարաշահում՝ անձնական շահ ստանալու նպատակով [2], մեկ այլ դեպքում՝ որպես «անձնական կամ այլ շահադիտական նպատակով տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում [3]: Այստեղ կարևորվում

է ֆիզիկական անձանց՝ որպես տնտեսական հարաբերությունների սուբյեկտների վարքագիծը, որի մասով առավել բնորոշիչ է «վաճառված» եզրույթը, քանի որ կոռուպցիոն կապերի մասնակից կարող է լինել ոչ միայն իշխանական լիազորություններ ունեցող անձը (ինչպես դա ընդունված է համարել), այլ նաև շարքային քաղաքացին, որը իշխանություն չունի, օրինակ՝ կաշառք տվողը: Տվյալ դեպքում նա նույնքան վաճառված անձ է, որքան պաշտոնատար անձը, ում համար, ըստ էության, նախատեսված էր կաշառքը: Եթե ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ կոռուպցիան ֆիզիկական անձանց՝ որպես տնտեսական սուբյեկտների պաշտոնական, տնտեսական կամ սոցիալական կարգավիճակի օգտագործման հիման վրա անօրինական հարստացումն է: Այլ խոսքով, կոռուպցիայի հիմքում ընկած են տնտեսական սուբյեկտների ծախվածությունը, նրանց եսասիրական շահերի իրացումը և պաշտոնական, տնտեսական կամ սոցիալական դիրքի չարաշահումը:

Ինչ վերաբերում է տնտեսական սուբյեկտների պաշտոնական դիրքին, ապա վերջինս այս կամ այն ֆիզիկական անձին որոշակի լիազորությունների հատկացումն է, այսինքն նրա՝ պետական, տնտեսական, սոցիալական կառավարման որևէ օղակում կառավարման սուբյեկտի վերածումը, ինչն արդեն ենթադրում է, որ պաշտոնական անձը՝ որպես իշխանության ներկայացուցիչ և դրա հետ կապված՝ կոռուպցիոն կապերի և հարաբերությունների կրող, իրապես գոյություն ունի և գործում է ոչ միայն տնտեսության պետական կառավարման (ինչպես ընդունված է), այլ մասնավոր հատվածում, ինչպես նաև տարբեր հասարակական կազմակերպությունների և միավորումների ճյուղավորված համակարգում՝ սկսած արհմիություններից վերջացրած քաղաքական կուսակցություններով ու միավորումներով:

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական կարգավիճակ ունեն ֆիզիկական և դրամական կապիտալի սեփականատերերը և բիզնեսի ներկայացուցիչները: Հենց նրանք՝ ունենալով որոշակի գույքային և ֆինանսական հնարավորություններ, իրենց նեղ անձնական շահերից ելնելով, հաճախ կաշառում են պետական պաշտոնյաներին, առաջ բերելով, այսպես կոչված, առևտրային կաշառակերություն:

Առավել բարդ է սոցիալական կարգավիճակի բնորոշումը, որը կոռուպցիոն կապերի ու հարաբերությունների տեսանկյունից պակաս վտանգավոր չէ: Սոցիալական կարգավիճակն առաջին հայացքից թվում է, թե կապված չէ պաշտոնական դիրքի և տնտեսական կարգավիճակի հետ: Բայց այստեղ ապրիորի առկա անձնական շահը ամեն ինչ է՝ թե՛ շահ, թե՛ կաշառք, թե՛ դիրք, որոնք էլ առաջ են մղում սոցիալական կարգավիճակ ունեցող մարդկանց: Սոցիալ-տնտե-

սական կարգավիճակի հիմքում ընկած են այնպիսի բարոյազուրկ երևույթներ, ինչպիսիք են կլանայնությունը, ընտանեկան, անձնական, արյունակցական կապերի ու հարաբերությունների առաջմղումը:

Շուկայական տնտեսության պայմաններում կոռուպցիայի խորքային պատճառների բացահայտման նպատակով նախ՝ հարկ է ճշգրտել կոռուպցիայի՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի բովանդակությունը, հետո՝ հետազոտել ու վերլուծել կոռուպցիան՝ որպես պատմական երևույթ (կատեգորիա) և բացահայտել կոռուպցիայի տնտեսական բնույթը:

Կոռուպցիան՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթ, ծագել է մարդկային հասարակության զարգացման որոշակի փուլում: Այն պատմական, այլ ոչ թե հավերժական երևույթ է և ծագում է պետության ի հայտ գալով, ենթադրելով ազդեցություն իշխող դասերի կողմից այլ խմբերի վրա: Պետության ծագման տնտեսական հիմքը հավելյալ արդյունքի առաջացումն է (արտադրողական ուժերի զարգացման որոշակի փուլում), որի հաշվին էլ պահպանվում է պետական ապարատը, ինչու չէ, նաև իշխող դասը: Հավելյալ արդյունքի ծագումը հանգեցնում է սեփականության փոփոխությանը (նախնադարյան սեփականությունից ստրկատիրականին): Հասարակության բոլոր անդամների միջև նյութական բարիքների հավասարարական բաշխմանը փոխարինում է նյութական բարիքների բաշխման անհավասարության սկզբունքը, առաջին հերթին՝ ըստ արտադրության միջոցների սեփականության չափերի, այսինքն՝ բաշխում շահագործողների փոքրամասնության օգտին (ստրկատերեր, ֆեոդալներ, կապիտալիստներ): Այս ամենը հասարակության մեջ հանգեցնում է սոցիալական լարվածությանը, սոցիալական արդարության ոտնահարմանը, կամ, ինչպես Արիստոտելն է նշում, խախտվում է «արդարության չափը»[4]:Հենց մասնավոր սեփականության ի հայտ գալը, դրանով պայմանավորված անարդարացի բաշխման հարաբերությունները, «արդարության չափի» կոպիտ խախտումը հասարակության մեջ ձևավորում են սնուցող միջավայր կոռուպցիոն կապերի ու հարաբերությունների համար: Եվ պատահական չէ, որ այս պայմաններում էլ ի հայտ է գալիս շահ ստանալու դասական ձգտումը: Տվյալ դեպքում կոռուպցիան կարելի է համարել շահ ստանալու ձևերից մեկը: Այսպիսով, կոռուպցիայի տնտեսական հիմքը կամ արմատական պատճառը պատմականորեն կազմում է սեփականության մասնավոր ձևը, ավելի նեղ իմաստով՝ անարդարացի բաշխման հարաբերությունները, իսկ շարժիչը՝ մարդու՝ որպես տնտեսական սուբյեկտի տնտեսական շահը: Թերևս սրանումն է կոռուպցիայի՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի էությունը: Մարդկային հասարակության զարգացման ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ կոռուպցիան՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթ,

միշտ եղել է ամենատարբեր քննարկումների կիզակետում: Հատկապես այն հասարակություններում, որտեղ մեծ է պետության՝ որպես քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտի դերը: Պատահական չէ, որ Պլատոնն իր «Պետություն» հայտնի աշխատության մեջ հատուկ ուշադրության է արժանացրել այն վտանգները, որ հասարակության համար կարող է առաջացնել մասնավոր սեփականությունը [5]: Այս առումով էլ հարկ է կոռուպցիան դիտարկել ոչ միայն պետական իշխանության, այլ նաև պետության, որպես այդպիսին, գոյության հիմնական վտանգ: Ֆրանսիացի հայտնի տնտեսագետ Պ.Ժ. Պրուդոնը «Ինչ է սեփականությունը» (1840) գրքում նկատում է, որ «բոլոր անարդարությունները, բոլոր բռնությունները ... պայմանավորված են սեփականության հաստատությամբ, ուստի ոչնչացրեք սեփականությունը և... այս սկզբունքային փոփոխության միջոցով դուք արմատապես կփոխեք օրենքները, կառավարությունը, տնտեսությունը, հիմնարկները, դուք կոչնչացնեք չարիքը երկրի վրա» [6]: Կոռուպցիայի հիմնախնդիրներին կարելի է հանդիպել շումերների, եգիպտական փարավոնների, հնագույն հնդկական, հռոմեական տրակտատներում և օրենքներում, որտեղ որպես կոռուպցիայի հիմնական սուբյեկտներ հանդես են գալիս ղեկավարներն ու դատավորները: Ուշագրավ է այն, որ գրեթե միշտ այս խնդրի մոտեցումներում որպես առաջնային մատնանշվում են գույքային, մասնավորապես սեփականատիրական հարաբերությունները, ինչը, բնականաբար, թույլ է տալիս խոսել կոռուպցիայի մասին արդեն որպես տնտեսական երևույթի:

Կոռուպցիային՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի, բնորոշ է ֆիզիկական անձանց՝ որպես տնտեսական սուբյեկտների ծախվածությունը, ագահությունը և անձնական շահի գերակայությունը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է այդ անձանց ոչ միայն պաշտոնական դիրքի, այլ նաև տնտեսական ու սոցիալական դիրքի չարաշահմանը: Ճիշտ չէ այն մտայնությունը, թե կոռուպցիոն երևույթներն առկա են միայն պետական կառավարման համակարգում: Այն իր արմատներն է ձգել նաև տնտեսության մասնավոր հատվածում ու տնային տնտեսությունների տիրույթում: Այլ խոսքով, շուկայական տնտեսության պայմաններում կոռուպցիայի ազդեցությունը տարածվում է շուկայական տնտեսության բոլոր երեք սուբյեկտների՝ պետության, բիզնեսի և տնային տնտեսությունների վրա: Տարբերությունը, ըստ էության, այս կամ այն ոլորտում կոռուպցիայի ունեցած տեսակարար կշռի մեջ է: Այս առումով այն առավել բարձր է պետական կառավարման ոլորտում, որը կոչված է իրագործելու տնտեսական ռեսուրսների և բարիքների բաշխումը տնտեսության բոլոր սուբյեկտների միջև: Մի բան պարզ է. շուկայական տնտեսության պայմաններում բոլոր սուբյեկտների վարքագծի շարժառիթը ցանկացած գնով շահ ստանալն է, որն էլ, ըստ էության, կոռուպցիան սնող միջավայրն է:

Կոռուպցիոն շրջանառության մեջ ներգրավված են հսկայական ռեսուրսներ, որոնք լեգալացման դեպքում տնտեսական աճի համար կարող են դառնալ հիանալի ռեզերվ: Տնտեսական կոռուպցիան ստվերային տնտեսության ձևերից է: Ընդ որում, տնտեսական կոռուպցիայի աճի հիմնական պատճառների շարքում կարելի է առանձնացնել տնտեսությանը պետական միջամտության աճը, հարկային բեռի մեծացումը, պետության կողմից մատուցվող «հասարակական ծառայությունների», ձեռնարկությունների չբաշխված շահույթի մակարդակների իջեցումը, տնտեսական գործունեությունը կարգավորող օրենսդրության բարդությունը և հակասականությունը, ազգային ավանդույթները և այլն: Ի վերջո, կոռուպցիան պետության կողմից ավելորդ վարչարարության անխուսափելի հետևանքն է, որը լուրջ խոչընդոտ է հասարակական մեխանիզմների նորմալ գործունեության, տնտեսության սոցիալական վերափոխումների և ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման համար: Այն հասարակության մեջ ծնում է անվստահության և վախի մթնոլորտ պետական հաստատությունների նկատմամբ, միջազգային ասպարեզում հարվածում է երկրի հեղինակությանն ու ի վերջո դառնում սպառնալիք երկրի անվտանգության համար: Կոռուպցիան բացասաբար է ազդում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալի աճի վրա, խեղաթյուրում է սոցիալական արդարության գաղափարը: Կոռումպացված պաշտոնյան, ուժեղացնելով իր դիրքերը, սկսում է պահանջել ավելի բարձր կաշառքներ: Այլ խոսքով, ներմուծվում է անօրինականության «մշակույթը», որն իր հերթին հանգեցնում է շուկայական տնտեսության անարդյունավետ գործունեությանը: Այս առումով՝ տնտեսության մեջ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար նպատակահարմար է պետական կարգավորումն ավելի շուտ ուղղել դեպի տնային տնտեսություններին, այլ ոչ թե ֆիրմաներին ու ձեռնարկություններին, այս դեպքում կարևորելով խթանները (հարկեր, արտոնություններ,սուբսիդիաներ), ոչ թե արգելքներն ու թույլտվությունները:

Լինելով բարդ ու բազմագործոն երևույթ՝ կոռուպցիան գործում է որոշակի «սահմանային գոտում», որը լեգալ տնտեսությունը բաժանում է ստվերայինից: Հարկ է նկատել, որ այս երևույթը տնտեսական հարաբերություններին ուղեկցում է դրանց ծագումից ի վեր: Այլ խոսքով, կոռուպցիան ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական կատեգորիա է, այն հասարակության, այսպես կոչված, անբուժելի հիվանդությունը կամ վնասաբեր միկրոբը, որը գրեթե միշտ առկա է «սահմանային» տնտեսական հարաբերություններում: Ստվերային տնտեսությունը կոռուպցիայի միջոցով սպունգի պես կլանում է մարդկանց այն հատվածը, ովքեր, զբաղված լինելով լեգալ տնտեսության մեջ, ստանում են անբավարար վարձատրություն կամ դժգոհ են գործող տնտեսական և քաղաքական

համակարգից: Մյուս կողմից՝ ակտիվանում են քրեական հակումներ ունեցող մարդիկ: Երբ ստվերային տնտեսության մեջ զբաղվածների թիվը դառնում է սահմանային, այսինքն՝ հասնում է որոշակի բիֆուրկացիայի կետի, տեղի է ունենում «սահմանային գոտու» զավթում ստվերայինների կողմից, և արդյունքում՝ լեգալ տնտեսությունը կորցնում է իր առաջատար դիրքերը: Ընդ որում, բացառված չէ այն իրավիճակը, երբ լեգալ տնտեսության բոլոր շերտերը զբաղված լինեն ստվերային տնտեսությամբ, որն այսպիսով դուրս է գալիս ընդհատակից և որոշ իմաստով դառնում լեգալ: Կոռուպցիայի բնորոշ գծերից է վարչարարության և բիզնեսի սերտաճումը գործունեության ամենատարբեր մակարդակներում: Այս իմաստով առանձնացվում են կոռուպցիայի հետևյալ ձևերը՝ ստորին, վերին և ուղղագիծ: Ստորին կոռուպցիան հիմնականում տարածված է պետական և մունիցիպալ ծառայության ստորին և միջին օղակներում (գրանցում, տուգանքներ, լիցենզիաներ, տարբեր թույլտվություններ): Վերին կոռուպցիան ընդգրկում է քաղաքական գործիչներին, պաշտոնյաներին և ուղեկցվում է բարձր գին ունեցող որոշումների ընդունումով (պետական պատվերներ, լոբբիստական գործունեություն, սեփականության ձևի փոփոխություն, օրենքների ընդունում): Կոռուպցիայի այս երկու ձևերին էլ բնորոշ են սոցիալ-հոգեբանական բնույթի որոշակի կազմակերպչական հարաբերություններ, որոնք միավորում են կոռուպցիայի այս երկու ձևերը, վերածվելով ուղղաձիգ կոռուպցիայի, որն ի վերջո ենթադրում է անցում դեպի կոռուպցիոն ցանցեր և ընկերություններ, ամբողջ քաղաքացիական հասարակության և պետության շերտավորում: Հետևանքը լինում է այն, որ կոռուպցիոն գործողությունները դառնում են հասարակության կյանքի առօրյա նորմեր:

Կոռուպցիան ծնող և նրա զարգացմանը նպաստող պատճառներից մեկը շուտափույթ անցումն է շուկայական հարաբերություններին և մասնավորեցմանը, որոնց արդյունքում շահողի դերում հանդես է գալիս նոր սեփականատերերի փոքր մասը: Բացի այդ, ոչ պակաս կարևոր են անարդյունավետ կառավարումը (անօրինականություն, վարչական ռեֆորմների անկատարություն), օրենսդրության թերությունները, որոնք իրենց ամբողջության մեջ սկսում են ետ մնալ սոցիալ-տնտեսական հարաբերություններից: Տեղի է ունենում նոր սովորութային արժեքների ներմուծում, որոնցում առաջնային է դառնում անձնական գերազանցության և հարստացման մոլուցքը, խաթարվում է ընդհանուր հասարակական բարոյահոգեբանական մթնոլորտը: Այսինքն՝ ստեղծվում է մի իրավիճակ, որտեղ բարեկեցության համարժեքը և չափորոշիչը դառնում է փողը, տեղի են ունենում հարստության և աղքատության ծայրահեղ բևեռացումներ, և վերջապես պետական շատ հաստատություններ սկսում են գործել ոչ արդյունավետ:

Մյուս կողմից՝ չկայացած քաղաքացիական հասարակությունը, երաշխավորված սոցփաթեթների բացակայությունը, պետական ծառայողների ցածր նյութական ապահովվածությունը, ներքին ու արտաքին շուկաներում ձեռներեցների հարաբերությունները կարգավորող անկատար իրավական և նորմատիվ ակտերը խոչընդոտներ են ստեղծում արդյունավետ կառավարման համար, դրանով իսկ նպաստելով կոռուպցիոն միջավայրի ձևավորմանը:

Կոռուպցիոն երևույթների հակազդման մեխանիզմը ենթադրում է կառավարման, իրավական, կառուցվածքային և արժեքային կարգավորում: Ինչ վերաբերում է կոռուպցիային հակազդելու կառավարման գործառույթին, ապա այն ներառում է պլանավորումը, կոորդինացումը, մշտական վերահսկողությունը, պետական կամ մասնավոր հատվածներում տնտեսական գործունեության խթանումը: Իրավական կարգավորումը ենթադրում է նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունում, գործող ակտերի վերանայում ու լավարկում և պայքար կոռուպցիոն դրսևորումների դեմ: Կառուցվածքային կարգավորումը նշանակում է նոր կառույցների, սոցիալական ինստիտուտների, հատուկ կազմակերպությունների ստեղծում և ներդրում: Արժեքային կարգավորումը ենթադրում է սոցիալական արժեքների սկզբունքային փոփոխություն, ներառյալ մարդու վարքագծի սոցիալական նորմերը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է գործող ստերեոտիպերի հաղթահարմանը, որոնց համաձայն՝ «կաշառք վերցնում են բոլորը», և ոչ մի հարց հնարավոր չէ լուծել առանց համապատասխան վարձատրության:

Այսպիսով, օրենքները, կարգադրությունները, որոշումները, ունենալով վարչաիրավական բնույթ, ուղղված լինելով կոռուպցիայի դեմ, բավարար չեն այդ արատավոր երևույթից ձերբազատվելու համար: Մասնավոր սեփականության պայմաններում այդ երևույթը չի կարող իսպառ վերացվել: Լավագույն դեպքում կարող ենք խոսել նրա չափերի կամ ծավալների մասին: Միայն յուրաքանչյուրին ապահովելով արժանապատիվ աշխատավարձ լեգալ աշխատանքի դիմաց, հասարակությանը դաստիարակելով կոռուպցիայի անընդունելիության հոգեբանությամբ, գործող իրավական նորմերը պաշտպանելով կոռուպցիոն ցանցերից, լեգալ տնտեսության մեջ կարելի է կրճատել կոռուպցիոն բեռը: Բոլոր դեպքերում գործ ունենք ռեսուրսների ու բարիքների բաշխման հետ, որը, ըստ էության, պետք է տեղի ունենա ոչ թե ըստ արտադրության միջոցների նկատմամբ առկա սեփականության ձևի կամ կատարած աշխատանքի, այլ հիմքում ունենա մարդու պահանջմունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թարգմանություն լատիներենից անգլերենի՝
   http://ablemedia.com/ctcweb/showcase/wordsonline.html,
   իսկ այնուհետև՝ անգլերենից հայերենի՝
2. http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=65&pageNumber=200
3. http://transparency.am/hy/resources/language-guide
4. **ՀՀ կառավարության 06.11.2003 N 1522-Ն որոշում՝** ՀՀ հակակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին:
5. Мыслители Греции. От мира к логике / Под ред. В.Шкода.-Харьков,1988.-883с.
6. **Платон**. Государсто//Мыслители Греции. От мира к логике / Под ред.В.Шкода.-М.,1999.
7. **Прудон П.Ж.** Что такое собственность.-СПб.,1907.-264с.

М.К. АГАЯН

КОРРУПЦИЯ КАК СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ЯВЛЕНИЕ

Рассматриваются сущность и содержание коррупции как социально-экономического явления. Проанализирована экономическая природа коррупции, ее непосредственная связь с формами собственности и распределительными отношениями. Влияние коррупции затрагивает все стадии процессов производства и перераспределения ресурсов, нарушает целостность экономических систем, сокращает доходы бюджетов всех уровней. В этом смысле требуется применение механизмов противодействия коррупции в правовых, структурных и ценностных сферах управления.

Ключевые слова: коррупция, частная собственность, экономические интересы, пограничная зона, легальная экономика, теневая экономика, незаконное обогащение, бизнес, неэффективное управление, рыночные отношения.

M.K. AGHAYAN

CORRUPTION AS A SOCIAL-ECONOMIC PHENOMENON

The essence and contents of corruption as social-economic phenomena are coneidered. The corruption nature in terms of economy, and its direct connection with the forms of property and distribution activities are analized. Corrpution affects all the stages of the resource generation and redistribution processes, and breaks the wholeness of economic system. In those terms, it becomes essential to apply anti-corruption strategies in management, juridical, structural contexts.

Keywords*:* corruption, private property, economic interests, boundary belt, legal economy, shadow economy, illegal enrichment, business, inefficient management, market relations.